

Փաստ. անվանումը	Շրջանավարտների միության կանոնադրություն
Փաստ. N	ԵՄՀ/ԸԿ-ԿԳ-45-01
Հաստատման ամսաթիվը	09/02/2016
Արձանագրության N	01-16
Հաստատող մարմինը	Գիտական խորհուրդ
Մշակող	Շրջանավարտների միություն
Ներդրման/իրականացման պատասխանատու	Շրջանավարտների միության նախագահ



1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Եվրասիա միջազգային համալսարանի Շրջանավարտների Միությունը (այսուհետ «ՇՄ») ինքնակառավարվող, կամավոր անդամակցության վրա հիմնված հասարակական միավորում է, որը նպատակն է ԵՄՀ շրջանավարտների գիտակրթական զարգացմանն ու առաջխաղացմանն խթանումը, ԵՄՀ-շրջանավարտ կապի շարունակական ամրապնդումը:

1.2 ՇՄ-ն ապաքաղաքական, ապակուսակցական, ներհամալսարանական և հասարակական միավորում է:

1.3 ՇՄ-ն գործում է ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ միջազգային պայմանագրերին, ՀՀ օրենսդրությանը, ԵՄՀ կանոնադրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան:

1.4 ՇՄ լրիվ անվանումն է՝ հայերեն՝ Եվրասիա միջազգային համալսարանի Շրջանավարտների Միությունը, ռուսերեն՝ Ассоциация Выпускников Международного Университета «Евразия», անգլերեն՝ Alumni Association of Eurasia International University:

1.5 ՇՄ հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան 0014, Ազատության 24/2, Եվրասիա միջազգային համալսարան

2. ՇՄ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1 ՇՄ առաքելությունն է օգտագործել ԵՄՀ շրջանավարտների մասնագիտական գիտելիքներն ու փորձն ի շահ ՇՄ-ի անդամների մասնագիտական կողմնորոշման և զարգացման:

2.2 ՇՄ նպատակներն են օրենքով սահմանված կարգով՝

2.2.1 շրջանավարտների ինքնաիրացման, համախմբվածության և սոցիալական առաջխաղացման ապահովում,

2.2.2 ամրապնդել բուհի և շրջանավարտների միջև շարունակական կապը,

2.2.3 շրջանավարտների մտավոր ներուժի օգտագործում ի շահ ԵՄՀ կարողությունների բարձրացման՝ աշխատաշուկային պահանջներին համապատասխան մասնագետներ պատրաստելու նպատակով,

2.2.4 ԵՄՀ կարողությունները օգտագործելով՝ նպաստել շրջանավարտների աշխատանքային և մասնագիտական առաջխաղացմանը, գիտելիքների կատարելագործմանը,

2.2.5 գործատու-շրջանավարտ փոխադարձ պահանջների բացահայտումն ու բավարարումը:

3. ՇՄ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3.1 Արդյունավետ կրթական գործընթացի կազմակերպման և գիտական հետազոտությունների զարգացման խթանում,

3.2 շրջանավարտների հետ մշտական անձնական և գործարար կապերի հաստատում և ընդլայնում, նրանց միջև փոխադարձ համագործակցության խթանում,

- 3.3 շրջանավարտների և ուսանողների միջև տեղեկատվության, նոր տեխնոլոգիաների զարգացման և փորձի փոխանակման կազմակերպում,
- 3.4 միության անհատական և կոլեկտիվ անդամների մասնագիտական գործունեության նվաճումների մասին տեղեկատվության տարածումը,
- 3.5 տարեկան գործունեության պլանի մշակում,
- 3.6 գործունեության արդյունքների վերաբերյալ տարեկան հաշվետվության կազմում,
- 3.7 ՇՄ անդամների հաշվառում,
- 3.8 շրջանավարտների վերապատրաստում, ինչպես նաև աշխատաշուկայում նրանց զբաղվածությանն աջակցության ցուցաբերում:

4. ՇՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

- 4.1 ՇՄ ղեկավար մարմինը ԵՄՀ ՇՄ Խորհուրդն է:
- 4.2 ՇՄ Խորհուրդը կազմում են միության նախագահը, քարտուղարը և համապատասխան հանձնաժողովները:
- 4.3 ՇՄ Խորհուրդը.**
 - 4.3.1 քննարկում և որոշումներ է կայացնում ՇՄ գործունեության վերաբերյալ,
 - 4.3.2 հրավիրում է ԵՄՀ ամենամյա համաժողովը և իրականացնում է համաժողովի նախապատրաստական աշխատանքները,
 - 4.3.3 սահմանում է ՇՄ անդամների հաշվառումը վարելու կարգը և պայմանները,
 - 4.3.4 մշակում է կանոնադրությունը, տարեկան և եռամսյակային պլանը և դրանք ներկայացնում տարեկան համաժողովին՝ հաստատման նպատակով,
 - 4.3.5 համակարգում է ԵՄ հանձնաժողովների աշխատանքը,
 - 4.3.6 հաստատում է ՇՄ տարեկան աշխատանքային պլանը,
 - 4.3.7 համաձայնում է շրջանավարտին ՇՄ կազմում անդամագրելու և վերջինիս պարտականությունները չկատարելու պարագայում անդամությունից հեռացնելու վերաբերյալ, սահմանում է ՇՄ անդամների հաշվառում վարելու կարգը և պայմանները,
 - 4.3.8 իր կազմից 2 տարի ժամկետով նշանակում է Խորհրդի նախագահին, վաղաժամկետ դադարեցնում է Խորհրդի նախագահի լիազորությունները,
 - 4.3.9 ՇՄ գործունեության ընթացքում օրենքով և սույն կանոնադրությամբ բարձրագույն մարմնի բացառիկ իրավասությանը չվերապահված և սույն կանոնադրությամբ չկարգավորված ցանկացած հարց լուծվում է ՇՄ Խորհրդի կողմից:
- 4.4 ՇՄ Խորհրդի նիստը.**
 - 4.4.1 հրավիրում է երեք ամիսը մեկ անգամ,
 - 4.4.2 նիստի ընթացքում հաստատվում են ՇՄ տարեկան և եռամսյակային աշխատանքային պլանները, ներկայացվում է գործունեության վերաբերյալ եռամսյակային հաշվետվությունը և քննարկվում է ՇՄ այլ հարցեր:
 - 4.4.3 ՇՄ Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է ԵՄՀ հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավարը կամ նրա կողմից լիազորված անձը:

4.4.4 համարվում է կայացած և կարող են հարցեր քննարկել, եթե նիստին մասնակցում են Խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն 2/3-ը:

4.4.5 Որոշումներն ընդունվում են ԵՄՀ ՇՄ Խորհրդի նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

4.4.6 Խորհրդի արտահերթ նիստ կարող է հրավիրվել ՇՄ Խորհրդի նախագահի կողմից՝ Խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն 2/3-ի գրավոր պահանջով:

4.5 ՇՄ համաժողովը.

4.5.1 հրավիրվում է տարին մեկ անգամ, ՇՄ Խորհրդի որոշմամբ՝ ՇՄ Խորհրդի նախագահի կողմից, դրա մասնակիցների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցման միջոցների կիրառմամբ,

4.5.2 համաժողովի օրակարգի, անցկացման տեղի, օրվա և ժամի մասին մասնակիցները ծանուցվում են համաժողովի գումարման օրվանից առնվազն յոթ օր առաջ՝ էլ. փոստի միջոցով,

4.5.3 ՇՄ համաժողովի պատվիրակների քվոտան սահմանում է ըստ ՇՄ անդամների թվի,

4.5.4 ՇՄ համաժողովի պատվիրակների ընտրությունը իրականացվում է ՇՄ համաժողովի գումարման օրվանից առնվազն երեսուն օր առաջ,

4.5.5 ՇՄ համաժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե ՇՄ համաժողովին մասնակցում են ՇՄ բոլոր անդամների կամ համաժողովի պատվիրակների ընդհանուր թվի կեսից ավելին:

4.5.6 Որոշումներն ընդունվում են համաժողովին մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:

4.5.7 ՇՄ արտահերթ համաժողով գումարվում է միավորման անդամների ընդհանուր թվի առնվազն 1/3-ի որոշման դեպքում, ոչ ուշ, քան 14 օրացուցային օրվա ընթացքում՝ ՇՄ Խորհրդի նախագահի կողմից:

4.5.8 Արտահերթ համաժողովները հրավիրվում են հրավիրողի օրակարգով:

4.6 ՇՄ համաժողովի ընթացքում.

4.6.1 որոշվում է ՇՄ Խորհրդի թվաքանակը, երկու տարի ժամկետով ընտրվում են միության Խորհրդի անդամները,

4.6.2 որոշում է կայացվում Խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ,

4.6.3 ՇՄ նախագահը հաշվետվություն է ներկայացնում ՇՄ Խորհրդի տարեկան գործունեության վերաբերյալ,

4.6.4 հաստատվում են ՇՄ կանոնադրությունը, դրանում կատարված փոփոխությունները, տարեկան և եռամսյակային պլանները,

4.6.5 ՇՄ անդամները կարող են հանդերձ գալ առաջարկություններով,

4.6.6 կարող են քննարկվել ՇՄ գործունեության վերաբերյալ այլ հարցեր:

4.7 ՇՄ Խորհրդի նախագահը.

4.7.1 ընտրվում է 2 տարի ժամկետով,

4.7.2 ղեկավարում է ՇՄ Խորհրդի աշխատանքները,

4.7.3 ստորագրում է ՇՄ համաժողովի և Խորհրդի կողմից ընդունված փաստաթղթերը,

4.7.4 նախագահում է ՇՄ համաժողովի և Խորհրդի նիստերը,

4.7.5 հրավիրում և գումարում է ՇՄ համաժողովի և Խորհրդի հերթական և արտահերթ նիստեր,

4.7.6 համաժողովի մասնակիցների մեծամասնության առաջարկի հիման վրա նշանակում է ՇՄ Խորհրդի քարտուղար:

4.7.7 նախագահության ժամկետի ավարտից հետո առնվազն 1 տարի մնում է Խորհրդի կազմում:

4.8 ՇՄ Խորհրդի քարտուղարը.

4.8.1 կազմակերպում է ՇՄ համաժողովները, Խորհրդի նիստերը և այլ միավորումների հանդիպումները,

4.8.2 տեղեկացնում է համաժողովի և Խորհրդի նիստերի օրակարգի, անցկացման տեղի, օրվա և ժամի մասին,

4.8.3 կազմում է համաժողովի և Խորհրդի նիստերի արձանագրությունները,

4.8.4 վարում է անդամների հաշվառումը և պարբերաբար թարմացնում նրանց վերաբերյալ տվյալները,

4.8.5 փոխարինում է ՇՄ Խորհրդի նախագահին և իրականացնում է ՇՄ բնականոն գործունեության ապահովմանն ուղղված այլ հանձնարարություններ:

5. ՇՄ ԱՆՂԱՍՈՒԹՅՈՒՆԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1 ՇՄ անդամ կարող է դառնալ ԵՄՀ յուրաքանչյուր շրջանավարտ անձնական դիմումի հիման վրա՝ ՇՄ Խորհրդի համաձայնությամբ:

5.2 ՇՄ անդամակցությունը իրականացվում է կամավոր հիմունքներով:

5.3 ՇՄ բոլոր անդամներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ:

5.4 ՇՄ անդամները իրավունք ունեն.

5.4.1 մասնակցել ՇՄ որոշումների կայացման, հեռանկարային և շարունակական աշխատանքների պլանավորմանը,

5.4.2 ստանալ տեղեկատվություն ՇՄ Խորհրդի որոշումների և գործունեության վերաբերյալ,

5.4.3 մասնակցել ՇՄ Խորհրդի կողմից կազմակերպված միջոցառումներին,

5.4.4 օգտագործել ՇՄ կողմից պատրաստված գիտական, մեթոդաբանական, տեղեկատվական և այլ նյութերի,

5.4.5 ստանալ ՇՄ խորհրդատվական և գիտամեթոդական օգնություն,

5.4.6 ՇՄ Խորհրդին տրամադրած դիմումի հիման վրա կամավոր դուրս գալ ՇՄ կազմից:

5.5 ՇՄ անդամները պարտավոր են.

5.5.1 ակտիվորեն նպաստել ՇՄ կողմից առաջադրված խնդիրների լուծմանը,

5.5.2 ժամանակին իրագործել ՇՄ Խորհրդի կամ ՇՄ ընդհանուր ժողովի որոշումները,

5.5.3 ՇՄ Խորհրդին ժամանակին տեղեկացնել կոնտակտային տվյալների և աշխատանքային պայմանների փոփոխությունների մասին,

5.5.4 պահպանել ԵՄՀ շրջանավարտի դրականը կերպարը,

5.5.5 հնարավորության դեպքում, ՇՄ աշխատանքների իրականացման համար տրամադրել նյութական, խորհրդատվական և այլ օգնություն,

5.5.6 գործունեություն ծավալել սույն կանոնադրությանը, ՇՄ կառավարման մարմինների կողմից ընդունված այլ իրավական ակտերին համապատասխան:

6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

6.1 ՇՄ ֆինանսական միջոցները գոյանում են ԵՄՀ հատկացումներից, դրամաշնորհներից, հանգանակություններից, նվիրատվություններից և ԵՄՀ Կանոնադրությանը չհակասող և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից (հետազոտություններ և այլ վճարովի ծառայություններ):

7. ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

7.1 Հանձնաժողովի կազմը (ընդհանուր թվով երեք հոգի) ընտրվում է ՇՄ հանաժողովի ընթացքում՝ մեկ տարի ժամկետով՝ բաց քվեարկությամբ:

7.2 Հանձնաժողովն իր կազմից ընտրում է նախագահ, որը խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել ՇՄ նախագահության նիստերին:

7.3 Վերստուգիչ հանձնաժողովն իրականացնում է ՇՄ որոշումների կանոնակարգային համապատասխանության, ֆինանսական միջոցների ու գույքի օգտագործման նկատմամբ վերահսկողությունը:

7.4 Վերստուգիչ հանձնաժողովը հաշվետու է ՇՄ խորհրդին:

8. ՇՄ ՎԵՐԱԿԱԶՄԱԿՈՐՈՒՄԸ

8.1 ՇՄ վերակազմավորվում է ՇՄ Հանաժողովի մասնակիցների 2/3-ի որոշմամբ՝ խորհրդի առաջարկությամբ: